# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2011 թվական N 584-Ա

ք.Հրազդան

## ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով «Կանի Լիճ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2011 թվականի դեկտեմբերի 21-ի գրությունը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը՝ Արովյան-Զրաբեր միկրոավտոբուսային երթուղին ժամանակավորապես հանձնել «Կանի Լիճ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սպասարկմանը:

2. Ներմարզային երթուղիների մրցութային հանձնաժողովին՝ սահմանված կարգով իրականացնել ավտոբուսների վիճակի գնահատում և համապատասխանության դեպքում թույլատրել շահագործելու երթուղիներում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ